

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2017 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2017 թվականի ընթացքում մարզպետի կողմից ընդունվել են 84 որոշումներ, 146 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 84 հրամաններ. հրավիրվել է մարզխորհրդի 2 նիստեր:

2017 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 7673 և ելք են արվել 9788 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

2017 թվականի երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում 2 գլխավոր մասնագետների/առողջապահության և սոցալ վարչության պետի տեղակալ, ՏԻ և ՀԳՄ վարչության գլխ. մասնագետ/. իսկ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում մարզպետարանի հաստիքացուցակում ընդգրկված մեկ առաջատար պաշտոն զբաղեցնող/զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի մասնագետ/ քաղաքացիական ծառայողների մրցույթներ են անցկացվել:

Մարզպետարանի աշխատակազմում 2017թ դեկտեմբերի 29-ի դրությամբ ժամանակավոր թափուր է աշխատակազմի ընդհանրի, կանանց և երեխաների հրավրունքների պաշտպանության բաժնի առաջատար պաշտոնի հաստիքը:

Սահմանված կարգով հրականացվեցին աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված փարբեր ժամանակահատվածներում երշաբաթվա մասնագիտական վերապատրաստում են անցան աշխատակազմի թվով 13 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2017 թվականի արնթացքում մարզպետի մոտ կատարվել է 1656 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմիերից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 33

դիմումներ, որից՝ 4-ը ստացվել են Ջերմուկի, 13-ը Վայքի, 16-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2017 թվականի ընթացքում 1328 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 37 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 33-ը պեպուստիկոզի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

2017 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1656 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն	1328
2. Նպաստի հարցերով	19
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	17
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	18
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	35
6. Աշխատանքի տեղավորման	29
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	11
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	37
9. Պետ.պատվերով բուժօգնություն	33
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	60
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	30
12. Այլ հարցերով	39

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան